



European Heritage Days
Journées européennes
du patrimoine

20.08.2013

Այս տարի արդեն 10-րդ անգամ Հայաստանը կմիանա Եվրոպական ժառանգության օրերին՝ հաստատելով իր անդամակցությունը Եվրոպական մշակութային ընտանիքին: 1991 թվականից Եվրոպայով մեկ իրականացվող այս նախաձեռնությունը գնահատվում է որպես Եվրոպայի միլիոնավոր քաղաքացիների կողմից սիրված և սպասված միջոցառումների շարք, ինչը թույլ է տալիս ազգային ժառանգությունները դիտարկել որպես Եվրոպա մայր ցամաքի մեկ ընդհանուր հարստություն՝ կոտրելով մշակույթների ու լեզուների տարբերություններով պայմանավորված անջրպետը: 1999 թվականից Օրերի մեկնարկը համատեղ են ազդարարում Եվրոպայի խորհուրդն ու Եվրոպական հանձնաժողովը:

Հայաստանում Եվրոպական ժառանգության օրերին ընդառաջ, այս օգոստոսի 30-ին քաղաքամայր Երևանի համար ամենից խորհրդանշական վայրում՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում կբացվի լուսանկարների ցուցահանդես՝ ներկայացնելով Երևանի հիմնադրմանը ժամանակակից մեկ այլ քաղաքի՝ հավերժական քաղաք Հռոմի ժառանգությունն ու անկրկնելի գեղեցկությունը: Ցուցահանդեսը, որը կրում է «Հռոմ. Իմ քաղաքի ժամանակակիցը» խորագիրը, ներկայացնում է դիվանագետ, մասնագիտությամբ ճարտարապետ Կարինե Դանիելյանի լուսանկարները՝ արված Իտալիայում իր դիվանագիտական առաքելության տարիներին:

ՀՀ մշակույթի նախարարության կողմից այս տարի առաջարկված «Ժառանգության ժառանգները» խորագրի համատեքստում՝ ցուցահանդեսը հասցեագրված է Երևանի ժառանգներին՝ հիշեցնելով պատմական քաղաքի բնակիչ լինելու յուրաքանչյուրիս պարտավորությունը: Այն մտածված է որպես Եվրոպայի գանձարան համարվող քաղաքով շրջայց՝ լուսանկարների միջոցով: Ցուցահանդեսի սկիզբը և ավարտը կխորհրդանշեն 2 պատկերազարդ պաստառներ՝ ներկայացնելով խաչվող հայացք Հռոմից Երևան: Ցուցահանդեսը Հռոմի և Հռոմից 29 տարով ավելի հին քաղաքի՝ Էրեբունիի հիմնադրման

պատմությունները համադրելու և քաղաքամայր Երևանի բնօրրանի մշակութային նշանակության և պահպանության շուրջ մտորելու այցելուին ընձեռված մի նոր հնարավորություն է:

Ցուցահանդեսի բացումը տեղի կունենա 2013թ. օգոստոսի 30-ին, ժամը 13:00-ին: Այն կգործի մինչև 2013թ. հոկտեմբերի 30-ը: